



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պալքանեան երկիրներ 50 Մէնմ, արտասահման 60 Մէնմ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

ԹԻԻ 9

2. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1930

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ ԵՂԱԾ ԿԵԱՆՔԷՆ

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿԷ

1921 ին Հիմալայայի մէջ թաւուտները բռնկեցան: Մինչ շատեր կ'աշխատէին հրդեհը մարելու, տեսալ որ մի քանի մարդիկ ուշադրութեամբ ծառ մը կը դիտէին: «Ի՞նչ կը դիտէք» հարցուցի, իբր պատասխան խօսակիցներս մատնանշեցին բոյն մը նստածին թռչնիկներով լեցուն: Բայց կրող ճիւղերը արդէն սկսած էին վառիլ. անոր վերեւ մայր թռչունը խելահորոյս կը թռչէր: Պիտի ուզէինք ազատել խեղճ թռչնիկները, բայց չէինք կրնար մօտենալ լափիզող բոցերուն պատճառաւ: Մի քանի րոպէէն բոյնը բռնկեցաւ եւ ես կը խորհէի որ հիմա մայր թռչունը պիտի փախչի: Բայց ի՞նչ մեծ եղաւ զարմանքս երբ տեսալ որ փոխանակ փախչելու վար իջաւ եւ իր թեւերը տարածեց իր ձագուկներուն վրայ: Քիչ յետոյ խեղճ թռչունը մոխրի վերածուեցաւ իր ձագերովը միասին:

Ասիկա ինծի համար աննախընթաց բան մըն էր, ուստի հարցուցի մօտս եղողներուն. «Միթէ չե՞ք զարմանար այս սքանչելի սիրտն վրայ, երեւակայեցէք թէ որքան աւելի զարմանալի ըլլալու է Անոր սէրը, որ այսպէս անձնագոհ սէր մը դրած է իր ստեղծածներուն մէջ: Այդ անձնատուր եւ անսահման սէրն էր որ Յիսուս Քրիստոսը երկինքէն վար բերաւ մարդանալու, որպէսզի իր կեանքը տալով կարողանայ փրկել զմեզ, որ մեռած էինք մեր մեղքերուն մէջ»:

Կեանքը արիւնին մէջ է, իր արիւնը թափելով Քրիստոս մեզի կեանք կուտայ: Ինչպէս որ յաճախ շիճուկ մը կը ներարկուի հիւանդութեանց բժշկութեան համար, նոյնպէս ալ իր արիւնովը Քրիստոս կը փրկէ զմեզ մեղքին մահացու ախտէն եւ մահէն:

Բոլոր տիեզերքը մարմին մըն է: Իւրաքանչիւր անգամ կապակցութիւն ունի մարմնին հետ, եթէ մէկ մասը ցաւի բոլոր մարմինը կ'զգայ. երբ որ եւ է անգամի մը մէջ շիճուկ մը ներարկուի բոլոր մարմինը կ'զգայ անոր հետեւանքը: Թէպէտեւ Քրիստոս երուսաղէմի մէջ խաչուեցաւ, որ փոքր տարածութիւն մը կը զրաւէ այս աշխարհին վրայ, բայց բոլոր տիեզերքը կ'զգայ իր մահուան հետեւանքը եւ բոլոր աշխարհը պիտի շարունակէ օգտուիլ իր փոխանորդական զոհին ձեռք բերած շնորհքէն:

1922 ին մինչ բարեկամի մը հետ կը ճամբորդէի Պաղեստինի մէջ, իրապէս կազդուութեացայ նշանաւոր հորի մը պաղ ու անուշ ջուրը խմելով: Մէկ ժամ վերջը դարձեալ ծարաւեցայ, յայնժամ Տէրոջը ըսած խօսքը ուժգնօրէն զարկաւ լիշողութեանս. «Ամէն ով որ այդ ջուրէն խմէ, նորէն պիտի ծաբաւի, բայց ով որ խմէ այն ջուրէն զոր Ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չծաբաւի, հապա այն ջուրը զոր Ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսիդին ջուրի աղբիւր մը՝ որ յաւիտեանական կեանքի համար կը բղխէ»:

Յովհ. Դ. 13-14: Քիչ մը առաջ խմած էի մարդոց փորած հորին ջուրէն եւ ծարաւած էի, իսկ կրնամ ամենայն խոնարհութեամբ եւ շնորհակալութեամբ ըսել որ քսանեակ մը տարիներէ (իմ սիրտս Յիսուսի տուած օրէս) ի վեր խմած եմ այն ջուրէն, զոր Ինք ինծի տուաւ եւ երբեք չեմ ծարաւած, որովհետեւ Նա արդարեւ կենաց Աղբիւրն է:

Անգամ մը Հնդկաստանի բլուրներուն մէջ ճամբորդած ատենս ժայռի մը վրայ նստայ հանգչելու համար: Ապառաժին ստորոտը մացառուտ մը կար, ուր բոյն մը հաստառուած էր. փոքր թռչուններու ճիչերը կը հասնէին մինչեւ ինծի: Մայր թռչունը կերակուր բերած էր եւ ձագերն ալ անոր թեւերուն շշուկը լսելով սկսան ճվճվալ: Երբ մայրը զիրենք կերակրելէ յետոյ հեռացաւ, հանդարտեցան: Բոյնը մօտէն քննեցի եւ զարմացայ տեսնելով որ դեռ աչքերնին բացուած չէր, բայց տակաւին առանց մայրերնին տեսնել կարենալու իրենց բերանները բացին երբ նա կը մօտենար: Անոնք չըսին. «Մինչեւ որ մեր մայրը կամ կերակուրը չտեսնենք չպիտի բանանք բերաննիս, ինչու որ չենք գիտեր թէ եկողը մեր մայրն է թէ թշնամի մը ու թէ նա կերակուր թէ թոյն բերած է»: Եթէ ձագերը այս սկզբունքով վարուէին, անտարակոյս երբեք պատահութիւն չպիտի ունենային ուտելու կամ տեսնելու, զի իրենց աչքերը բացուելէ առաջ սովամահ պիտի ըլլային: Անոնք չտարակուսեցան իրենց մօրը սիրոյն վրայ եւ հաւատքով ընդունեցին ինչ որ նա բերաւ: Մի քանի օր յետոյ, երբ անոնց աչքերը բացուեցան, անոնք ուրախացան իրենց սիրելի մայրիկը տեսնելով ու հետզհետէ զօրանալով ու աճելով անոր նմանութիւնով: Քիչ ատենէն կրցան նաեւ թռչիլ ազատ օդին մէջ: Մարդիկ, Աստուծոյ ստեղծածներուն բարձրագոյնը, միթէ աւելի պակաս չե՞ն յաճախ քան թէ այս անշուն թռչնիկները, վասն զի խոստովանելու ենք ըսելու թէ յաճախ կ'սկսածներ ունեցանք մեր երկնաւոր Հօր գոյութեան եւ սիրոյն մասին: Յիսուս ըսաւ. «Երանի՜ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան». Յովհ. Ի. 29:

Շատեր, որոնք չեն տեսներ իրենց սխալներն ու սկաւորութիւնները, միշտ ուրիշներուն մէջ սխալներ գտնելու կ'աշխատին: Աչքը որ միայն իրմէ դուրս եղող առարկաները կրնայ տեսնել, երբեք չտեսներ ինքզինքը եւ իր պակասները միայն հայելիին մէջ նայելով աչքը կրնայ տեսնել ինքզինքը ու իր թերութիւնները: Աստուծոյ Խօսքին հայելիին մէջ նայելով ու մարմին եղած Բանին հետ մտերիմ յարաբերութեամբ ապրելով մենք ալ կրնանք իրապէս ճանչնալ ինքզինքնիս: Նա ոչ միայն մեզ պիտի ցուցունէ մեր մեղքը, այլ պիտի յայտնէ նաեւ Ինքզինքը Իր փրկարար, բժշկող ուժով: Եթէ իրեն դառնանք հնազանդութեամբ, յարատեւ աղօթքով ու ապրելով Իր Սուրբ

ընկերակցութեան ներկայութեան մէջ, Նա պիտի վերցնէ մեր թերութիւնները եւ պիտի կերպարանափոխէ զմեզ իր փառաւոր պատկերին՝ բոլոր յաւիտենականութեան համար: Այսպէս մենք Իր փառքին բաժնեկից պիտի ըլլանք. Յովհ. Ժէ. 24:

Անգամ մը բլուրներու վրայ գտնուած ատենս մըջիւն մը աւսայ, որ աստանդ կը վազվզէր կերակուր փնտռելու: Հունտ մը գտնելով դպաւ անոր ու դարձեալ մեկնեցաւ. պահ մը վերջը մըջիւնը վերադարձաւ իր ընկերներով: Ան չխորհեցաւ կերակուրը միայն իրեն պահել, այլ կը փափաքէր որ անոնք ալ իրեն բաժնեկից ըլլային: Անձնատէր մարդիկ կրնան դաս մը սորվիլ մըջիւնէն: Անոնք որ հոգեւոր օրհնութիւններ ստացած են Աստուծոյ հետ ապրած ըլլալով՝ պարտին Իր Խօսքը տանիլ անոնց, որոնք դեռ չեն լսած Իր մասին, որպէսզի անոնք ալ կարենան ընդունիլ Աստուծոյ օրհնութիւնները, ապրիլ Անոր մտերմութեան մէջ յաւիտենական ուրախութեամբ:

Մինչեւ որ ազի դունդ մը չհալի, չկրնար համ տալ կերակուրին, ու մինչեւ որ արեւին ջերմութենէն չհալի լեռներու ձիւնը, նա չկրնար վար հօսիլ ոռոգելու արեւակէզ ու ծարաւած դաշտերը, կամ մինչեւ որ ձիւնը չհալի, չկրնար վեր բարձրանալ իբր ջրաշղթի ամպերը կազմելու, որոնցմէ յետոյ կրնայ իջնել իբր անձրեւ, չոր ու ցամաք երկիրը կանանչ պտղաբեր դարձնելու: Մենք ալ եթէ չենք հալած Արդարութեան Արեգակին ճառագայթներէն եւ Սուրբ Հոգւոյն կրակէն, ո'չ կրնանք ծարաւի հոգիի՝ ճշ պապակը յաղեցնել, ո'չ ալ զայն կենաց Աղբիւրին առաջնորդել, ուր հոգին գոհացում պիտի գտնէ եւ ապրի յաւիտեանս:

Աստուած մեզի շնորհ տայ Քրիստոսը ապրելու, որպէսզի կարողանանք միջոցներ ըլլալ ուրիշները Փրկչին բերելու:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՎԵՐՋԱՐԱՆ

ԵՐԿԵԱՅԻՆ ՕՐԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

(Շար. 8րդ Թիւէն)

Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսի գերութենէն եւ իշխանութենէն ազատելէ վերջ, ծարաւ ու յոգնած կը հասնի Մեռոսի դառն ջուրերուն, որոնք անմիջապէս կ'անուշան իրենց մէջ նստուած փայտին միջոցով: Այսօր նա տակաւին իրողութիւնը նոյնն է. փայտը, խաչը, այսինքն իրաւունք Բրիստոսը, կը հեռացնէ դառնութիւնը ամէն բանէ, որ առանց անոր մտածի դառնութիւն պիտի ունենար:

Այսպէս այն ճամբորդները զօրութիւնէ զօրութիւն կը յառաջանան Մեծայի դառն ջրերէն, որ անուշնալու պէտքը ունէին, անոնք կը հասնին Եղիմի անուշ եւ առատ ջրերէն, որմէ յետոյ այն հրաշալի ջրերն, որ վէմէ մը կը յորդէր, որ էր Քրիստոս (Ա. Կոր. Ժ. 10): Զուրը օրհնեալ Սուրբ Հոգին մէկ օրինակն է:

Զուրին նման հոգացուեցաւ նաեւ անոնց կերակուրը: Անոնք ստացան մանանան, երկնային հացը: Ինքզինքնիս կը գտնենք դարձեալ խաչին առջեւ, քանզի Քրիստոս է երկինքէն իջած մեր հացը: Խաչին վրայ կտրուած Անոր մարմինը իրապէս Աստուծոյ հացն է որ «Երկինքէն կ'իջնէ ու աշխարհի կեանք կուտայ» (Յովհ. 2. 33):

Այսպէս այն ճամբորդները բոլորովին Աստուծոյն կը կերակուրէին ու կ'առաջնորդուէին: Զուրը որ Սուրբ Հոգին օրինակն է, կեանք չէր տար անոնց, այլ անոնց կեանքը կը պահէր: Մանանան, Կենաց Հացին օրինակը, կեանք չէր տար, այլ կը պահպանէր անոնց կեանքը: Սուրբ Հոգին սակայն՝ Տէրն է ու Տուիչը կեանքին: Յիսուս Քրիստոս է Կենաց Հացը, որ կուտայ կեանքը ու նաեւ կը պահէ զայն:

Սակայն հակառակ իր զանազան առանձնաշնորհութիւններուն եւ օրհնութիւններուն, Իորայէլի ժողովուրդը անապատին մէջ զԱստուծոյ բարկացոյց: Երեւակայեցէ՛ք: Անոնք հրաշալի կերպով ազատեցան, հրաշալի կերպով կերպով կերակուրեցան, հրաշալի կերպով պաշտպանուեցան հիւանդութիւնէ, քանզի «Անոնց ցեղերուն մէջ ահար մարդ մը չկար» (Սաղմ. ԺԵ. 37): Սակայն եւ այնպէս անոնք տրտնջեցին եւ անհաւատաբար դառնուեցան: Անոնց կեանքը լեցուած չէր ուրախութեամբ եւ յաղթութեամբ, որ էր Աստուծոյ խեղճը անոնց համար, խեղճ մը, որուն հասնիլ կարելի էր միմիայն **ԽՈՍՍՍՅԵԱԼ ԵՐԿՐՐԻՆ** մէջ:

Այսպէս հասան անոնք Կողէր-Քառնեայ, ուր անոնց առջեւ տարածուած կը կենար Խոտացեալ Երկիրը, որ օրինակն է Յաղթական Կեանքին, զոր նկարագրեցինք մեր ընթերցողներուն:

Երբ կը կարդանք պատմութիւնը, կ'ակնկալենք լսել թէ անոնց սիրտերը ուրախութեամբ լեցուած եւ շրթունքները գոհութեան երգերով, որոնք յառաջ վաղեցին իրարու հետ մրցելով թէ ո՞վ պիտի ըլլար առաջին մտնողը: Մովսէս ժողովուրդը հաւաքելով անոնց ըստ. «Դուք Ամօրհացոց լեռը եկաք, զոր մեր Տէր Աստուծոյ մեղի կուտայ: Նայէ, քու Տէր Աստուծոյ երկիրը քու առջեւ դրուեւ, ելիր, ժառանգէ զանկիւս, ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուծոյ քեզի տուաւ, մի վախարար ու մի զարհուրիր» (Բ. Օր. Ա. 20, 21): Եւ ահա զարմանալի բան մը պատահեցաւ: Ժողովուրդը մերժեց երթալու «Մեղմէ առաջ մարդիկ զրկենք, որպէսզի երկիրը լրտեսեն», ըսին անոնք: Եւ Մովսէս հաւանեցաւ: Այս ժողովուրդը չէր կրնար Աստուծոյ վստայիլ: Հետեւեալը ամենաւ ծանօթ է: Հրտեսները կը վերագաւառնան հրաշալի պատմութիւնով մը եւ հրաշալի պատգանբով: Անոնցմէ երկուքը, որոնք թերեւս բերած էին այն խաղողի սղկոյզը, ըսին՝ «Ելենք, ու ժառանգենք զայն, քանզի մենք անշուշտ կարող ենք անոր տիրելու», սակայն մնացեալ տասը աղաղակեցին՝ «Մենք այն ժողովուրդին վրայ ելլելու կարող չենք, վասնզի անոնք մեզմէ զօրուոր են» (Թուոց ԺԳ. 31): Երկու հաւատարմները կրկին խօսեցան՝ «Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այն երկիրը պիտի տանի, եւ զանկիւս մեզի պիտի տայ: Միայն թէ Տէրընք դէմ

ապստամբ մի ըլլաք, եւ այն երկիրն ժողովուրդէն մի վախարար, քանզի անոնք մեր կերակուրն են. անոնց պաշտպանութիւնը դացած է իրենց վրայէն, ու Տէրը մեզի հետ է, անոնցմէ մի վախարար» (Բ. Օր. ԺԳ. 8, 9):

Սակայն ժողովուրդը տառն կողմը բռնեց եւ մերժեց հնազանդիլ Կենդանի Աստուծոյն: Մերժեց մտնել այն երկիրը, որուն առաջնորդուած էր Աստուծոյն եւ զոր Աստուծոյն իրեն տալ խոտացած էր: Եւ Աստուծոյն ա'լ ուրիշ պատհանութիւն չտուաւ անոնց: Այն ժողովուրդէն քան տարեկանէն վեր եղող եւ ոչ մէկը, ի բաց առեալ Յեսու եւ Քաղէր, կրկին տեսան այն երկիրը:

Ի՞նչ կը նշանակէ այս ամէնը: Սակա ճգնաժամային պարագայ մըն էր անոնց համար: Անոնց ետեւն էր Եգիպտոս, որ իրենց սխտոր, պրտա եւ սոխ կուտար, բայց նաեւ գերութիւն: Անոնց առջեւ կը կենար խոտացեալ երկիրը կաթով, մեղրով եւ քաղցր պտուղներով եւ ազատութիւն: Ո՞րը ընտրէին: Գոհութիւն Աստուծոյ որ Եգիպտոս չվերադարձան, սակայն աւա՛ղ որ անոնք մերժեցին մտնել խոտացեալ երկիրը, ուր կար հաղթանակութիւն եւ հաղորդութիւն Աստուծոյ հետ: Այսպէս անոնք 40 տարի անապատին մէջ թափառեցան որդայթներու մէջէն, ապականիչ ժանտամահներ ու կէսօրուան ստերը ստապեցնող հարուածէն:

Ի՞նչի օրինակ են այս ամէնը: Խոտացեալ երկիրն է Յաղթական կեանքը: Այս յօդուածներով ջանացինք առաջնորդել մեր ընթերցողները մինչեւ Յաղթական կեանքին սահմաններուն եւ անոնցմէ ներս նայեցանք: Արդեօք ներս ալ մտանք: Այս է Աստուծոյ կամքը բոլոր անոնց համար որ Իրեն կը վստահին իբրեւ իրենց Փրկիչն: Անոր փափաքն է որ հիմա մտնենք հոն եւ յաւիտեան հոն բնակինք: Մեզի ծանօթ մեղքերէ ազատ կեանք մը վարելու դժուարութիւնները հսկայ եւ անպարտելի կ'երեւանան: Անոնք կը նմանին Քանանու բնակիչներուն: «Քեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր» (Բ. Օր. Բ. 1):

Մենք կը հաւատանք թէ Աստուծոյ մեզի կը պատուիրէ. «Ելիր, ժառանգէ զանկիւս: Մի՛ վախարար ու մի՛ զարհուրիր» (Բ. Օր. Ժ. 21): Շատ հաւատացեալներ անկարելի կը նկատեն Յաղթական կեանքը, կը կարծեն թէ իրենց կարողութեան սահմանէն դուրս է: «Մենք կարող չենք մտնել», կ'աղաղակեն: Աստուծոյ կը կանչէ մեզ ապրիլ այս կեանքը ԻՐ զօրութեամբ եւ ոչ թէ մեր: Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այն երկիրը պիտի տանի: Մեզի պէտք եղածն է զմեզ եւ մեր բոլոր ունեցածը բացարձակօրէն Իրեն յանձնել եւ պարզմտութեամբ հաւատալ թէ Քրիստոս կարող է Իր բոլոր խոտացածը կատարելու: Մեր Տէրը կը պատուիրէ մեզի երթալ եւ զայն ժառանգել: Յիշեցէ՛ք թէ Աստուծոյ կը տրամադրէ մեզի Իր ամենակարողութիւնը թէ՛ մեզ պահելու եւ թէ՛ զմեզ Իր ծառայութեանը համար գործածելու:

(Շար.)

Տէր, ես խոտ մըն եմ միայն որ քիչ ատենէն պիտի անցայ. տանայ: Կ'ընդունիմ իմ ճակատագիրս ուրախալի վստայութեամբ մը. միայն թէ Տէր, գիտնամ թէ Գոն ես որ զիս անկած ես, Գոն ես որ զիս կը ջրես, եւ Գոն որ զիս պիտի հնձնէ երբ իմ ժամս գայ:

P. Dieterlin

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Որ ձեր վրայէն մէկդի հասնէք ան ձեր առջի վարմունքին պէս եղած հին մարդը խաբէտոյ ցանկութիւններով ապականուածը. եւ ձեր մարին հոգիովը նորոգուիք:

Եփես. Գ. 22, 23

Յիսուս Քրիստոսի հաւատացեալները վերստին ծննդեան միջոցաւ Նոր կեանք կ'ստանան:

Այս Նոր կեանքը մէկ քայլով չվերջանար: Ան կայուն չէ, միշտ կը փոխուի, կը սորվի, կը խոնարհի, կը հնազանդի եւ կ'աճի հետզհետէ բազմապատիկ համեմատութիւններով: Ապրող հոգին կ'արմատանայ Քրիստոսի անսահման շնորհքին եւ գերազանց գիտութեան խորերը:

Ուրեմն Նոր կեանքը միշտ նոր յառաջդիմութիւններ կ'ունենայ:

Նոր կեանքը սկսող հոգին կը փոխուի.— Կը փոխուի իր հին վարքէն, հին սովորութիւններէն, ապրելակերպէն, զործելակերպէն, զաղափարներէն, սկզբունքներէն եւ վերջապէս հին մարդը իր վրայէն կը հանէ, քանի որ հիմա Նոր մարդը պէտք է հազնի որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է արդարութիւնով եւ ճշմարիտ սրբութիւնով:

Ան պէտք է իր Արարչին նման սուրբ ըլլայ:

Նոր կեանքը սկսող հոգին կը սորվի.— Կը սորվի ամէն օր Աստուծոյ խօսքէն, որ զինքը կատարելապէս կը ղեկցնէ բանական եւ անխարդախ կաթով: Այս հայելիին մէջ նա կը սորվի տեսնել Տէրոջ փառքը, զօրութիւնը, ողորմութիւնը եւ բոլոր մտքէ վեր եղող աստուածային սէրը: Իր աչքին առջեւ պարզուող աստուածային նկարագրի յատկանիշները տեսնելով՝ կը սորվի անոր նմանելու ջանալ եւ օրէ օր կը նորոգուի իր Փրկչին հոգիովը:

Նոր կեանք սկսող հոգին կը խոնարհի.— Կը խոնարհի իր բնական խեղճ ու կրակ վիճակը տեսնելով: Կը խոնարհի Անոր փառքին առջեւ իր բացարձակ ոչնչութիւնը ղեկելով: Կը խոնարհի ամէն բանի մէջ իր Տէրոջը յարմար ընտիր աման մը ըլլալու համար: Կը խոնարհի Քրիստոսի անսահման սիրոյն տիրանալու համար: Կը խոնարհի մեղկանալով իր գերութենէն, պատիւէն, կարողութիւններէն եւ այսպէս յաղթական խոնարհութեան բարձունքներուն վրայ իր Տէրը կը փառաւորէ:

Նոր կեանք սկսող հոգին կը հնազանդի.— Կը հնազանդի պարզ գերիի մը պէս: Իր կամքին մեռած է. Աստուծոյ կամքը իր փափաքներուն իրագործումն է: Ան կ'ընէ ամէն բան, կ'երթայ ամէն տեղ, կը հնազանդի միշտ, որովհետեւ Աստուծոյ պատուիրանքները ծանր բաներ չեն իրեն համար:

Նոր կեանք սկսող հոգին կ'աճի.— Ամէն օր աչքերը իր Առաջնորդին յառած նա կը նորոգուի ու կը զարգանայ: Գիտութեան եւ յայտնութեան հոգին իր մէջ հրաշքներ կը գործէ, եւ ան կ'աճի ճշմարիտ որթին վրայ հաստատուած ճիւղի մը պէս, որ միշտ բարի մշակին գուրգուրանքին առարկան է, ուստի ան կ'աճի իր գործունէութեան, սիրոյ, զգաստութեան, հաւատքին եւ աստուածապաշտութեան մէջ:

Ան ետեւի բաները մոռցած է եւ առջեւի եղածներուն կը զիմէ, նպատակը ղեկելով՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազէ, մինչեւ հասնի Քրիստոսի սիրոյն եւ շնորհքին լայնութիւնը եւ երկայնութիւնը, խորութիւնը ու բարձրութիւնը ճանչնալու բարձրագոյն մակարդակին:

Նոր կեանքը ո՛րքան իրական եւ բեղուն է:

Անիկա Աստուծոյ զաւակներուն փառաւոր առանձնաշնորհումն է, որուն մէջ հաւատացեալները կը սերտեն ու կը ճանչնան խաչեալը, որ թէեւ մարդոցմէ մերժուած եւ անարգուած, բայց Աստուծոյ սիրուած եւ ընտրուած է եւ որուն մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունքութիւնը:

Երանի՛ անոր, որ շնորհքի այս սուրբ Աղբիւրին համեմուտ համար նեղ դռնէն կը մտնէ ու կը սկսի «Նոր կեանքը»:

Զ. Բ. ՊՈԽՏԱՔԵԱՆ

ՄՏԵՐՄԻԿ ԽՕՍՔԵՐ

ԵՍ ՉԱՐ ԲԱՆ ՄԸ ԸՐԱԾ ՉԵՄ

ՍԻՐԵԼԻ Մ.

Անցեալները երբ կը հարցնէի քեզի Թէ արդեօք ապաշխարութեան մասին կը խորհի՞ս, դեռ վերջնական քայլէ առնելու չե՞ս առ քրիստոս, վասն զի փրկութեան վստահութիւնը շատ կարեւոր է, օտար երկրի մէջ գտնուող մէկու մը անցագրին չափ կարեւոր, ու աւելի էական: Ասոր պատասխանելիք Թէ, «Ես չար բան մը չեմ քննարկ, ո՛չ սուս խօսեցայ, ոչ մարդ ուղանցի, ո՛չ բան մը գողցայ որ երբեք Աստուծոյ ներքեւ խնդրեմ ու Թողութիւն ընդունիմ»: Իրաւ է Թէ այդ բաները չըրիք, ու Թեքեալ ճանապարհային ամէն պատուիրանքները կատարած կը սեպես ինքզինքդ, այսու ամենայնիւ դարձեալ երջանիկ չես ու կզգաս Թէ բան մը կը պակսի: Մինչդեռ կատարեալ մարդ մը կատարելապէս երջանիկ զգալու է ինքզինքը:

Բայց ես պիտի փափաքէի այսօր քեզի պզտիկ լուսաբանութիւն մը տալ աղօթելով որ իսկապէս օգտակար ըլլայ քեզի:

Քրիստոնեաներու օրէնքը տասնաբանեան չէ, հաւաք մեր օրէնքին լրումը նոյն ինքն Յիսուս Քրիստոսն է։ Սակայն եթէ տասնաբանեային ալ մօտենանք եւ անոր մէջի տասը կէտերէն իւրաքանչիւրը մէկիկ մէկիկ ու շաղկապեալ անոնք, պիտի տեսնենք թէ անոնց հանդէպ արդէն մեղանշած ես, թէեւ կ'ըսես թէ մեղանշած չես։

Արդ, բաց ինծի հետ ելից ի. գլուխը ու կարգանք 1—17 համարները։ Հոս առաջին անգամ կը տեսնենք թէ օրէնքը երկու մաս ունի։ Առաջին մասը ցոյց կուտայ մեզի մեր պարտականութիւնները հանդէպ Աստուծոյ եւ ծնողաց, որոնք Անոր ներկայացուցիչներն են աշխարհի վրայ, իսկ երկրորդ մասը ցոյց կուտայ մեզի մեր պարտականութիւնները հանդէպ մարդոց։

Առաջին հինգ պատուէրներէն եթէ միայն առաջինին վրայ խորհելու ըլլանք, այն ատեն ահա ուսարսաւ փով պիտի լեցուինք։ Ի՞նչ է այս պատուէրը։ «Ես եմ նիովա, քու Աստուծոյ, որ քեզ եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի, ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս»։

Սիրելի Մ. Լըօրէն մոռածէ, անկեղծ եղիւր դուն քեզի դէմ. նիովա՞ն է քու Աստուծոյ, Անկէ տարբեր աստուածներ չունի՞ս։ Ո՛չ պիտի ըսես թերեւս, բայց գործնականին մէջ ինչպէ՞ս է. ո՞րը աւելի կը սիրես, զԱստուծո՞ւ թէ դրամը, տունը, խանութը, կինը, զաւակը, սպտիւղը, մարմինը, զարդեղէններդ, հանդերձներդ, հացոյքները, սիկարէթը, խմիչքը . . . :

Ես երբ ապաշխարեցի ու իմ աչքերս լուսաւորուեցան Աստուծոյ խօսքով, տեսայ թէ իմ վիճակս ահաւկու էր, վստահ ունէի շատ մը չաստուածներ իմ սրտիս, մտքիս մէջ, որոնք իմ Հօր Աստուծոյ տեղը զբաւած եւ Անոր գահը կործանած էին։ Ու դեռ այսօր ապաշխարելէս շատ տարիներ յետոյ կը գտնեմ անկիւններ, ուր փոշիներու տակ դեռ կը գտնուին կուռքեր անտեսուած, որոնք իմ երջանկու թեանս արգելք կ'ըլլան։ Սիրելի Մ. կը խոստովանիմ թէ տասնաբանեայի այս առաջին պատուիրանին առջեւ բացարձակապէս ամօթահար կը մնամ եւ չեմ համարձակիր աւելի առաջ անցնիլ միւս պատուիրանները՝ քննելու։ Ըսեմ՝ քեզի թէ ես ալ իմ ապաշխարելէս առաջ այս տասը պատուէրներուն վրայ թեթեւօրէն կը մտածէի, բայց երբ Ս. Հոգին լուսաւորեց զիս, հասկցայ թէ անոնցմէ մէկը միւսէն աւելի դժուար էր կատարել, անոնց ամենուն հանդէպ պարտազանց գտնուած էի ցարդ եւ պիտի գտնուէի եթէ իմ փրկչիս շնորհքը ինծի հասած չըլլար։

Դեռ այսօր կը տեսնեմ որ զբաղումներու շատ նալովը, գործերու բազմապիսիւթիւնը հետզհետէ նոր կուռքեր երեւան կը բերէ իմ մէջս եւ կ'ուզէ զիս անոնց կապել, այնպէս որ կը հետեւցնեմ թէ դեռ այսօր կայ իմ մէջս ոյժ մը ոչ աստուածային, որուն նպատակն է զիս կապել աշխարհի ու կուռքերու։

Դեռ այսօր կը տեսնեմ թէ յաճախ իմ բերանս Աստուծոյ սուրբ անունը արտասանեց, բայց իմ սիրտս, կամքս անոր ետեւը չէր կենար. սովորութեան պէս բան մը ըլլալով գործածեցի Անոր անունը։ Դեռ այսօր կը տեսնեմ թէ հանգստեան օրուան մէջ ի՞նչ սքանչելի սլարտականութիւններ դուրս եկն։ Թէեւ անոնց մէջ շատերը կը կատարեմ, բայց ուրիշներու մէջ ալ թերի կը մնամ։

Նոյնիսկ աղօթքի ժամանակ ալ առօրեայ գործերը իմ միտքս կը լեցնեն յակամայս, ու ես դեռ մնացեալ պատուիրաններուն վրայ մտածելու չհասած, կ'աղաղակեմ, ի՞նչ խղճալի մարդ եմ ես, ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմնէն։

Հիմա կ'ուզեմ քեզի հարցնել թէ դուն ալ քու փորձառութիւնովդ չե՞ս հաստատել զայս, դուն ալ այս խնդրոյն ի տես չե՞ս ըսեր, իրա՞ւ է ես յանձաւոր եմ, ալ չեմ կրնար ըսել թէ տասնաբանեայ պատուիրանքը կը կատարեմ, մինչեւ հիմա մեղանշած եմ անոր հանդէպ։ Արդ, ըսեմ՝ քեզի թէ ուրիշներ ալ չկրցան այդ պատուիրանները լի ու լի, Աստուծոյ մօքին համաձայն կատարել եւ ոչ մէկը մեր Տէրոյմէ զատ։

Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ օրէնքը սուրբ է եւ որովհետեւ մենք չենք կրնար կատարել զայն, ուստի Աստուծոյ իր Միածինը տուաւ, որպէսզի օրէնքը կատարելով մեզի կատարեալ ազատուի՝ պարգեւէ օրէնքէն, Անիկա է մեր արդարութիւնը։

Արդ, եթէ քու սիրտդ կատարելապէս բանաս ընդունելու Քրիստոսը, այն ատեն Աստուծոյ կեանքը, սէրը քու մէջդ պիտի բնակի զքեզ իր սլատկերին փոխելու, վստահ մարմնացեալ օրէնքին (Քրիստոսի) նպատակն է զմեզ Աստուծոյ նմանցնելու։ Փառիւնցիները տասնաբանեան պահելով հանդերձ բաւական չէին Աստուծոյ արդարութեան համեմատ վստահի միայն արտաքին բաներով գոհացած՝ նպատակ չունէին տասնաբանեային ետեւը կեցող Քրիստոսի հնազանդելու։ Այս պատճառաւ օրէնքը որպէս մեղցնող գիր կը մնայ, մինչդեռ անոր նպատակն էր Քրիստոսը ցոյց տալ, որ անմահական ջանքերէ, ճիգերէ յոգնածներուն իրենց անմահական արդարութեան զգուածներուն կ'ըսէ, «Եկէք ինծի բոլոր յոգնած ու քեանաւորուածներ եւ ես ձեզ պիտի հանգցնեմ»։

Արդ, Մ. ամենը մեզ գործեցին եւ Աստուծոյ վառքէն պակաս չեն, այդ ամենուն մէջ դուն ու ես ալ կանք։ Տեսնեմ թէ տասնաբանեան իր լայն նշանակութիւնով կատարել անկարելի է ու եթէ նոյնիսկ փորձէինք ալ, անիկա զմեզ երջանիկ չպիտի ընէր, հապա պիտի մասնանշէր մարմնած Դաւն Աստուծոյ, վստակ առանց Անոր արեանք Թախտելուն Թողութիւն չըլլար։

Ուստի Քրիստոս է մեղքերու Թողութիւն ու կատարեալ ներում շնորհողը, Անիկա է կատարեալ երջանկութեան ակն ու աղբիւրը։

Արդ, մի՛ անտեսել զԱյն, որ հիմա արհամարհուած, անարգուած ու խաբուած կը տեսնես, որ սակայն օր մը իբր աշխարհի

Դատաւորն ու իշխանը պիտի յայտնուի, Որոշն երեսէն փախիլ պիտի ուզեն զինքն արհամարհողները ըսելով, լեռնէ՛ր մեր վրայ ինկէ՛ք, բլուրնէ՛ր մեզ ծածկէ՛ք:

Այդ օրուան չհասած սիրելի բարեկամս, միեւնոյն ատեն Տէրօջը առջեւ պարզ երեսով ելլելու համար, կը խնդրեմ քեզմէ Քրիստոսի կողմանէ, հաշտուէ Աստուծոյ հետ:

Քու. փրկութեանդ սիրովը լեցուած բարեկամդ Յ.

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Քրօֆ. «Յ. ՊէթէֆՍ»

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԱՌԱՋԻՆ ԷՁԸ

Ը. ԳԼՈՒԽ

ՉՈՒԿԵՐ ԵՒ ԹՈՂՈՒՆԵՐ

«Աստուած ըսաւ, Զուրբը կենդանութեան շունչ ունեցող շատ սողուններ հանեն, եւ թռչունները երկրի վրայ, երկինքի հաստատութեան երեսը, թռչին: Եւ Աստուած ստեղծեց մեծամեծ կէտերը եւ ամէն սողացող կենդանին, զորոնք Զուրբը առատ հանեցին անոնց տեսակին պէս, եւ Աստուած տեսաւ որ բարի են: Եւ Աստուած օրհնեց զանոնք ըսելով՝ աճեցէ՛ք ու շատցէ՛ք եւ ծովերուն մէջ եղած Զուրբը լեցուցէ՛ք: Թռչուններն ալ երկրի վրայ շատնան: Եւ իրիկուն ու առտու ըլլալով հինգերորդ օրը եղաւ» (Ծննդ. Ա. 20-23):

Նախորդ գլխուն մէջ խօսեցանք լուսնի, արեւի եւ աստղերու վրայ: Անոնց երեսումէն ետքը ատեն մը հանդարտութիւն տիրեց երկրի վրայ եւ ցամաքը անգամ մըն ալ վիժխարի անտառներով ծածկուեցաւ: Բայց շատ չանցած՝ չորրորդ օրուայ (ժամանակաշրջանի) վախճանին դարձեալ գիշեր տիրեց եւ արեգակը Թանձր խաւարով ծածկուեցաւ: Երկիրը ահեղ շառաւիղնով ու շաջիւնով դարձեալ դուրս ժայթքեց կրակ ու լավա, կազմեց նոր լեռնաշղթաներ եւ աւազի, տիզմի ու ապառաժի տակ Թաղեց բոլոր ընդարձակածաւալ անտառները, որոնք աստուածային կամքին համաձայն երկրի տակ ամբարուեցան իրր անսպառ մեծերք վառելանիւթի, որպէսզի մենք կարենանք այժմ դուրս հանել զայն ու անով տաքցնել մեր բնակարանները եւ շարժել մեր մեքենաները, վայրաշարժելն ու շոգեւանելը:

Ասկան իր հրաբուխները հանդարտեցան, հալած քարերէ կազմուած լեռները պաղեցան, Թանձր մուխն ու գորշընն անհետացան եւ հինգերորդ օրուան մէջ պայծառ ու սիրուն արեգակը անգամ մըն ալ սկսաւ լուսաւորել մեր մոլորակը, այն ատեն երկիրը նորէն ծածկուեցաւ ճոխ բուսականութեամբ, քանի որ երրորդ օրուան մէջ անոր գոյութիւն տուող աստուածային խօսքը իր աղբեցութիւնը գեռ կորսնցուցած չէր եւ չպիտի ալ կորսնցնէ որքան ատեն որ երկիրը կայ ու կը մնայ: Բայց այս չէր ամէնը: Հինգերորդ օրուան մէջ բոլորովին նոր բան մըն ալ երևան եկաւ: Աստուածային հրամանով գոյութիւն առաւ կենդանական աշխարհը, ծովու մէջ սկսան շարժիլ ձուկերը եւ օդին մէջ թռչունները:

Շատեր արդէն զարմացած են որ կենդանական այդքան այլազան երկու դասակարգեր միասին կ'առնուին եւ կը ցուցուի Թէ երկուքն ալ միեւնոյն օրուան մէջ մտեղծուած են: Բայց ուշադիր գիտական զննութիւն մը մեզի պիտի ցուցնէ Թէ ձուկեր եւ թռչուններ Թէեւ մէկ մէկէ բաւական մեծ տարբերութիւն

ունին, բայց շատ բանի մէջ ալ իրարու նման են: Երկուքին ալ մարմինը ձուածն է եւ սրածայր յետակողմ մը ունի. առ մեծ դիւրութիւն կ'ընծայէ՝ օդին կամ ջուրին մէջ արագութեամբ շարժելու: Երկուքն ալ չեն քալեր, հապա կը շարժին լողանելով կամ թռչելով: Երկուքն ալ իւր զեկ կը ծառայէ հոգմաբարձեւ պոչ մը. երկուքն ալ ծածկուած են՝ տանիքի կղմնորներու նման իրարու վրայ շարուած թեփերով կամ փետուրներով, որոնք ցուրտին ու խոնաւութեան դէմ կը պաշտպանեն մարմինը իւղով մը, մածուցիկ հեղուկով մը ծածկելով: Երկուքն ալ շատ թեթեւ, բայց զօրաւոր ուկորներ ունին: Երկուքն ալ հասկիթով կը բազմանան: Նաեւ Թէ՝ ձուկերուն եւ Թէ թռչուններուն արեան գնդիկները կըր չեն, — ինչպէս են չորքոտանիներուն ու մարդունը, հապա երկար ձուածն ու մեծ: Երկու դասու կենդանիներէն ալ շատեր գաղթելու բնազդ ունին, ինչպէս գաղթող թռչունները, նոյնպէս ալ տառերը, ձողածուկը եւ ուրիշ ձուկեր անթիւ խումբերով ծովերու խորէն կ'ելլեն եւ կը գաղթեն դէպի անծանօթ կողմեր: Եթէ մարդ այս ամէնը միտք բերէ, կրնայ շատ իրաւամբ պնդել Թէ թռչունները օդին ձուկերն են եւ կը լողան անոր մէջ, եւ ընդհակառակն ձուկերն ալ ջուրին թռչուններն են ու կը թռչին անոր մէջ: Ալ չիտանք սուղակ կոչուած բազմաթիւ թռչուններու վրայով, որոնք աւելի դիւրաւ ջուրին մէջ կրնան լողալ ու սուզիլ քան Թէ օդին մէջ թռչիլ, եւ ո՛չ ալ թռչող ձուկերու վրայով, որոնք կրնան ատեն մը օդին մէջ թռչիլ:

Աստուած այս արարածներուն ազատ ու գեղեցիկ կեանք մը շնորհած է: Շատ մը լեզուներու մէջ անոնց բարեբաղդուն թիւնն ու ազատութիւնը առածի կտրգ անցած են: Արծիւր շքեղօրէն կը ճախրէ ժամերով լեռներու բարձր կատարներուն շուրջ եւ հեշտօրէն կ'օրօրուի կապոյտ մթնոլորտին մէջ: Բայց օդերու խիսական թագաւորին՝ հզօր Ալպադրոսի (ձկնիւղի) բնակավայրը քովն է հարաւային բեռնին: Օծտուած արծիւնէն շատ աւելի լայն թեւերով՝ հասնոյքն ունի նա հեռանալ հարկաւոր մղոն ցամաքէն ու շարժանքով գիշեր ու ցորեկ կռուի նաւուն կայմերը խորտակող եւ զայն խաղալիքի մը նման հոս ու հոն նետող փոռորիկին դէմ, եւ խալտու ծայնով աղաղակել Աստուծոյ, որ իրեն յարմար ատենին որս ու կերակուր խրկէ: Բայց նոյն ծովերուն մէջն է դարձեալ, ուր կ'իշխէ հսկայ վիշապաձուկը՝ ահաբալու անկինաւոր գլխով, սուկալի ատամնաշաւով եւ աւելի մեծ քան կէտը: Նա յաճախ ջուրին երեսը կ'ելլէ, նստերուն հետ կը խաղայ, անոնց վրայ կը յարձակի եւ կը ծակէ ու կ'ընկղմէ զանոնք, եւ յետոյ դարձեալ դէպի խորը կը սուզի, կը կտրէ կ'անցնի իր ջրային պետութեան թեւերէն: Թեւեաւոր բնակիչները մեղդի պէս կը ցրուին եւ փախուստի կը դիմեն, նոյնիսկ շանաձուկը, ծովերու այդ կատաղի վագրը: Իրաւ որ վիշապաձուկն ալ վեհափառ մըն է:

Հինգերորդ օրուան մէջ ստեղծուած արարածներուն մ'նաւորներն ալ մեզի պահուած են: Երկրի ներքին խաւերը, հաստատելով Սուրբ Գրոց պատմածին ստուգութիւնը՝ մեզի կը վկայեն Թէ հսկայ բոյսերու ստեղծումէն յետոյ երկրի վրայ նախ տալին ու վրայութիւն պատահեցաւ: Բայց ետքը, երբ ամէն բան հանդարտած էր, ծովուն մէջ երեսան եկան սարսափելի բազմաթիւ ջրային կենդանիներ, որոնց մ'նացորդները երկրի միջանի (մասնաւորաբար հերձաքարը) խաւերը կը լցնեն: Եթէ մարդ դիտէ Թէ ինչպէս հարկաւորաւոր ու հազարաւոր ծովային կենդանիներու մ'նացորդներ յաճախ խոնուած են հերձաքարի ոչ այնքան մեծ կտորի մը վրայ, այն ատեն կը հասկնայ Ծննդ.

Ա. 20, 1 «Ջուրերը ամեն կողմ կենդանի էակներով զեռան» (ըստ Նորագոյն Թարգմ.):

Այդ խաւերուն մէջ կը գտնենք Նաեւ «Ծովային մեծ կենդանիները», որոնց վրայով բնագիրը մեզի կը խօսի եւ զորս հալերէն Թարգմանութիւնը «մեծամեծ կէտեր» կը կոչէ: Ասանց մ'նացորդները մենք բնագիտական Թանգարաններու մէջ կը գտնենք: Իրենց ձեւին նայելով՝ անոնք տափասարակ մոդէլազգիներ կը կոչուին, մինչդեռ իրականին մէջ 20-50 ոտք երկարուած համար հսկայ կենդանիներ են: Այսպէս կոհակներու մէջ իր չորս հոսկոյ լողաթեւերով հոս հոն կը շարժէր անհարկ «ձկնա՝ մողէզը» եւ իր մեծ երկարածեւ. ցուպին մէջ սուր ատամներով կը փշրէր ձուկեր եւ ուրիշ ծովային կենդանիներ, որոնց մ'նացորդները մենք այսօր իսկ իր ստամոքսին մէջ կը գտնենք: Մասնաւորաբար ուշագրաւ են այս ծովու հսկային աղբիւրը, քանզի անոնք՝ մեզի հասած կմախքին նայելով շատ մը շարժական ոսկորներով շրջապատուած էին եւ անոնց շնորհիւ կրնային ըստ պարագային շատ փոքրանալ եւ կամ պնակի մը չափ մեծնալ: Այդպէսով կենդանին ո՛ր կը կուրանար, եթէ յանկարծ ծովուն մակերեսին վրայ բարձրանար եւ ոչ ալ առանց լոյսի կը մնար եթէ ուկիանոսին խորքին մէջ իր որսին ետեւէն վազէր: Երկրի խաւերուն մէջ դեռ ուրիշ ծովային կենդանիներ ալ կը գտնուին մեծ բազմութեամբ . . .

Երկրի այդ խաւերուն մէջ, ուր ջրային կենդանիներու բրածոները պահուած են, կը գտնուին Նաեւ առաջին Թռչուններուն հետքերը, որոնք կ'ապացուցանեն Սուրբ Գրքի պատմածը Թէ ասոնք ալ ձուկերուն հետ միասին արարեալագործութեան հին գերորդ օրումն (ժամանակաշրջանին) մէջ ստեղծուած են: Թէեւ Թռչուններու մ'նացորդները այնքան առատ չեն, որքան ջրային կենդանիներունը, բայց այդ պարագան կը բացատրուի երկու իրողութիւններով: Նախ՝ առաջինները այնքան մեծ բազմութեամբ ստեղծուած չէին որքան վերջինները: Աստուածաշունչը զեռալ վխտալ քառք միայն ծովային կենդանիներու համար գործածած է: Երկրորդ՝ ասոնք անշնչանալու ատեն, հազարներով տիրէին: Մէջ Թաղուեցան եւ հոն հետզհետէ քարանայով մինչեւ այսօր պահուեցան, մինչդեռ Թռչուններու դիակները մեծաւ մասամբ երկրի վրայ, օդի ազդեցութեան տակ մ'նացին, փառեցան եւ առանց հետքի կորսուեցան: Այսու հանդերձ հին գերորդ օրումն Թռչուններու մ'նացորդներէն ալ բաւական շատ ունինք, Թէ՛ այնպիսիներ, որոնք ներկայ ժամանակի Թռչուններուն կը նմանին եւ Թէ՛ այնպիսիներ, որոնց նմանը այժմ գոյութիւն չունի:

Լսենք Նաեւ ծովային կենդանիներու բեղմնաւորութեան նկատմամբ, որ ստեղծագործութեան պատմութիւնը պարունակող գլխուն մէջ կը շեշտուի (Մ'ննդ. Ա. 22): Աստուածային այս օրհնութիւնը իր ազդեցութիւնը այսօր իսկ կը բանցնէ ջրային կենդանիներու վրայ: Մինչդեռ Թռչունները բաղդատարար շատ դանդաղ կը բազմանան եւ միայն 1,6 հաւկիթ կ'ածեն, ձուկերը բազմանալու այնպիսի ոյժ մը ունին, որ կը գերազանցէ Նախորդ գլուխներու մէջ յիշուած բոյսերու բեղմնաւորութիւնը: Միակ տառելի մը իր փորին մէջ ունի մինչեւ 68,000 հաւկիթ, ծածան մը՝ 200,000 — 342,000 եւ ձողածուկ մը՝ 4 — 9 միլիոն: Բնականաբար այս հաւկիթներէն միլիոնաւորներ կ'ոչնչանան փոթորիկներու, ջրային Թռչուններու եւ ուրիշ պատճառով: Այսու հանդերձ ծովեզրերը բնակող մը կրնայ համազօրի Թէ անոր խորութեանց մէջ ի՛նչ անարկու քանակութեամբ կենդանիներ կը պահուին: Օրինակի համար, Հավրէն տարիներէ ի վեր ամէն օր 30—40 նաւակներ կերթան եւ համեմատաբար փոքր տեղի մը

մէջ խեղճեցնենք ու կարիտներ (ծովու մարտիս) կ'որսան եւ այնքան մեծ քանակութեամբ, որ անոնցմով Թէ՛ ծովեզրի եւ Թէ՛ փարիզի եւ Բուանի բնակչութիւնը առատօրէն կը կերակրուի: Բայց կենդանիները նուազման նշան երբեք չեն ցուցներ: Նոյնպէս Նիւ Գաուտլանտի ծովածոցին մէջ 15—20,000 ձկնորսներ միջին հաշուով տարեկան 30,000,000 փրփրուկներ կը բռնեն, սակայն այս ծովին քանակը դեռ ընտաւ պակասած չէ: Անդին՝ տառեխներու գաղթին ատեն միայն Նորվեկիացի ձկնորսներ քանի մը շարժումն մէջ 300 միլիոն տառեխ կ'որսան եւ երբեմն այնքան առատ որ նոյնիսկ իրենց արտերը ձուկով կը պարարտացնեն (կ'աղբնեն): Ասկէ զատ շանաձուկերու եւ կէտերու խումբերն ալ կը հետեւին անոնց ու հազարներ կ'որսեն անոնցմէ: Այսու ամենայնիւ տառեխները երբեք չեն քիչնար: Թէեւ անոնց մեծամասնութիւնը ամէն տարի Անգլանդեան ուկիանոսի խորերը կ'իջնէ եւ հոն մեծ ձուկերու կեր կը դառնայ, բայց ամէն տարի հիւսիսային բևեռէն Նորիւ կուգան եւ կը լեցնեն ամէն կողմ, կը նմանին անսպառելի գետի մը, որ միշտ կը հոսի, բայց չցամքի: Պնդուներ եղած են Թէ, ԼԹէ որսալու եւ փոխադրելու համար հարկ եղած միջոցները գոյութիւն ունենային, կարելի պիտի ըլլար ամբողջ մարդկութիւնը ձուկերով սնուցանել եւ դարձեալ անոնց Թիւր չափով պակսէր:

Ըսել է հինգերորդ օրումն մէջ Աստուծոյ բրածո հրամանը այսօր ալ դեռ ի զօրու է: «Ջուրերը կենդանութեան շունչ ունեցող ստեղծներով վխտան: Ահեղէք ու շատցէք եւ ծովերուն մէջ եղած ջուրերը լեցուցէք»:

(Շար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՄՆԱՅՈՒՆ ԳՈՐԾԵՐ

Մարի բաւական ատենէ ի վեր դաշնակի դաս կ'առնէր լաւ բրօֆէսօրէ մը: Ուսուցիչը տեսնելով որ իր աշակերտուհին ամէն դիւրութիւն ցոյց կուտար սորվելու եւ շատ շուտ ալ կ'ըմբռնէր զանիկա սիրով յառաջ տարաւ երաժշտութեան սքանչելի, լուսաւոր եւ անըջային դաշտերուն մէջ:

Օր մը կարգը եկաւ Պէթովէնի փաթէթիք սօնաթիւն: Մարի շատ աշխատեցաւ անոր վրայ, բայց գործը յառաջ չէր երթար: Դասի օրը եկած էր, Մարի իր էթիւտներն ու միւս վարժութիւնները մատերու սքանչելի ճկունութիւնով մը նուագեց, եւ սակայն երբ կարգը սօնաթիւն եկաւ, անոր դէմքը ամպոտեցաւ:

— Ի՛նչ ունիս աղջիկս, հարցուց բրօֆէսօրը:

— Այս կտորը շատ դժուար է, չեմ հասկնար զայն եւ չեմ ալ կարծեր թէ երբեք պիտի կրնամ սորվիլ զայն կեանքիս մէջ:

— Մի յուսահատիր աղջիկս, աշխատութեան ու ջանքի առջեւ բան չգիմանար: Քեզի կրնամ տալ օրինակ Շթրաւսի վալս մը կամ «Կոյսին աղօթքը» կտորը կամ ուրիշ մը, բայց ատոնք անարժէք

Թնթեւ բաներ են: Ես քեզի մինչեւ հիմա լուրջ եւ դասական կտորներ տուի, որոնք երաժշտական աշխարհի մէջ արժէք կը ներկայացնեն. իմ աշակերտներուս երբեք թուլատրած չեմ թեթեւութիկ երաժշտութիւն ընել, ու գիտեմ թէ անոնք երբ աւելի գիտակցութեան հասան, ուրախացան որ ես երբեմն խիստ գտնուեցայ եւ պահպանողական իմ սկզբունքներուս վրայ: Սորվէ այս սօնաթը, պիտի հասկնաս զայն եւ պիտի ուրախանաս զայն գիտցած ըլլալով:

Մարի հաւատաց իր ծերունազարդ ուսուցչին հայրական խօսքերուն, ջանաց տող առ տող, էջ առ էջ, աքօրտնիրք քակելով, մատները սեղմոտելով ու վարժեցնելով, մինչեւ որ ուսուցիչը շարաթններ յետոյ հաւնեցաւ եւ ըսաւ «Ապրիս Մարի, լաւ սորված ես»: Այս գնահատական խօսքը ի՞նչ սփոփարար էր Մարիի համար, վասն զի խեղճ աղջիկը շատ ժամանակ տուած էր եւ ասով վերջապէս կը վայելէր իր ջանքին արդիւնքը: Անիկա սիրեց այս սօնաթը, գոց սորվեցաւ եւ յաճախ կը նուագէր, երբ բարեկամներ կամ ազգականներ իրենց կուգային: Բայց քանի՜ կը նուագէր, այնքան աւելի կը հասկնար կտորը, այնքան աւելի կ'ազդէր աքօրտնելուն կողմնորոշման հնչումը իր սրտին, մտքին ու կամքին: Մարի գնահատած էր սօնաթը, անոր ամէն մէկ զարկին հետ իր սիրտն ալ կը զարնէր, ամէն տխրասունսներուն մէջ իր սիրտն ալ կը մարէր կարծես. Մարի կ'ապրէր այդ մարդկային սքանչելի երկը, որ հազարներ ներշնչած էր:

Ատեն մը վերջ, երբ անգամ մըն ալ մտաբերեց այն դասը, որուն մէջ իր բրօֆէսորին առջեւ յուսահատ կը կենար, ամէցաւ եւ գնաց ներողութիւն խնդրեց միեւնոյն ատեն շնորհակալ եղաւ, որ զինք այդպիսի մեծ ուրախութեան մը առաջնորդած էր այդ կտորը տալով: «Յետ այսու Պ. բրօֆէսոր պիտի նուագեմ միայն մնայուն կտորներ: Անոնց արժէքը ճանչցայ այլեւս, երաժշտութեան համը նոր առի»:

Տարիներ յետոյ մեծ երաժշտունի մը եղած էր Մարի. ամէն կողմէն կը գովուէր, կը սիրուէր, կը յարգուէր, ու Մարի բնաւ չէր մոռնար այն ժամը: Նախ յուսահատութիւն ցոյց տուած ըլլալուն համար կը տրտմէր, այսու աւենայնիւ ուրախ էր որ այդ յուսահատութիւնը առիթ տուաւ այն սքանչելի դասին, որ իր ուսուցչին երկար տարիներու փորձառութենէն բղխած էր:

Սիրելի պատանի, ի՞նչ կը կարդաս, ի՞նչ կը նուագես, ի՞նչ կը սորվիս, ո՞ր գեղարուեստը կը մշակես:

Տարիքոտներու փորձառութիւնը քեզի կ'ըսէ թէ կան ընթերցումներ, որոնք անարժէք եւ ժամանակ, ոյժ, առողջութիւն, միտք եւ սիրտ կը սպառեն. կարդա մնայուն եւ արժէքաւոր բաներ, որպէս զի չզղջաս: Կեանքդ արժէքաւոր ըրէ եւ արժէքաւոր բաներով սնուցանէ զայն:

Խորհէ թէ կեանքի արժէքին մասին Բրիտոս ի՞նչ բառերով կ'արտայայտուի: Ի՞նչ կը շահի մարդ, թէ որ բոլոր աշխարհը վաստկի ու իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ: Ուստի Անոր մաքուր սկսէ քու առօրեայ գործերուդ, ընթերցումներուդ եւ Անոր հետ օրը վերջացուր եւ ինքզինքդ արժեցուր մարդկութեան եւ աշխարհի առջեւ ու Աստուծոյ Թագաւորութեան համար: Այն ատեն պիտի կրնաս նաեւ ուրիշներուն արժէքը գնահատել եւ անոր համաձայն կերտել կեանք մը, որ մնայուն գործերով զարդարուն է:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱԶԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ, այս տարի տեղի պիտի ունենայ Մարտէլի մէջ Սեպտեմբեր ամսուան 8-11: Ներկայացուցիչներ պիտի ըլլան ՖրանսաՅայ Աւետարանական բուրգ եկեղեցիներէն: Ինչպէս ուրիշ տարիներ, այս անգամ ալ երեկոները տեղի պիտի ունենան աւետարանական ժողովներ:

Մարտէլի եկեղեցին տարիներով կ'ապառէր, Միւթեան ժողովը անգամ մը իր մէջ վայելեւոյ, բայց տեղի չգոյութիւնը միշտ արգելք մ'ընէր ասոր: Այժմ այդ արգելքները վերացուած են եւ եկեղեցին մեծ յուսով եւ աղօթքով կը սպասէ սոյն օրհնութիւն օրերուն:

ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ.— Հայերէն շատեր նամակով յաճախ կը հարցնեն մեզի թէ Կաթոլիկ Ֆրանսայի մէջ Բողոքականներ ալ կո՞ւն, ուրիշներ որոնք այս տեղէն անցած եւ Ֆրանսայի մէջ ալ աւետարանականներու գոյութիւնը լսած են, զարմանքով ըսած են մեզ թէ առաջին անգամն էր որ կը լսէին այս մասին: Այս հարցման կատարեալ գոհացում տուաւ համար հրատարակած ենք գիրք մը «Անապատի Եկեղեցին» անունով, 112 էջոց եւ 15 գեղեցիկ պատկերներով:

Գրքին մէջ ցոյց կը տրուի թէ Ֆրանսայի մէջ թեւեւ պոլտիկ բայց բաւական արթուն եկեղեցի մը կայ, որ կը սեռի չարքաշ, բարեպաշտ, իրենց հաւատքին համար ամէն չարչարանք արհամարհող, ամէն վնաս աղտոտութիւն սեպտող նախահայրէ: Գիրքն շատ ներշնչող է, մանաւանդ պատմական եւ կատարելագէտ իրաւացի. ի չողեւոր թեւադրութիւններով: Աւետարանի սքանչելի յաղթանակին մէկ կողմէն է Ֆրանսայի աւետարանական պատմութիւնը, որ կը յիշեցնէ ճիշդ մեր ուղիքին մարտիրոսութեան պատմութիւնը: Կ'արժէ կարդալ զայն: Գրին է 6 փրանք Ֆրանսայի եւ Սիւրիոյ համար եւ կէս տուար արտասահմանի. ապաքիւլ «Բանբեր»ի հոսցէով:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպար. «ԲԱՆԲԵՐ»-ի, 7, Բիւ Բարեր